



չարաթը մէկ անգամ կերթան լուսաւորչական եկեղեցի. կը սորվին նաեւ իրենց եկեղեցու ձայնաւորութիւնը. Մենք կը մտածենք որ, երբ միջոց եղանակով հայ լուսաւորչական եկեղեցու մէջ աւետարանական ոգի եւ կրթութիւն մտցնենք, հայ եկեղեցին աւելի շատ կը մաքրուի (!) եւ կը յատկանշուի (!), քան թէ այդ եկեղեցու ծոցէն այդ չափ մաքուր ոգիական եկեղեցու գիրկը ընդունինք: (\*) Ես անձամբ չորս հայ եկեղեցիներու մէջ քարոզեցի եւ գտայ լաւ ընդունելութիւն. Այսպիսի առիթներ մենք չենք կրնար ձեռք ձգել երբ հայերը մեր վրայ այն դադափարը ունենան թէ մենք կողմնադիրներ իրենց սիրական մայր եկեղեցու ծոցէն բաժնել . . .

Ան գործնական կազմաւորութեամբ տիպար որբանոց մը, որու օրինակէն կրնան օգտուիլ մեր ազգային որբանոցները. Այսօրինակ կազմաւորութիւն սակայն կը պահանջեն ինքնակամ առատ միջոց որմէ ցըժարողաբար դուրի են մեր որբանոցները. Ուրեմն հայ ունեւոր, հայ արհեստաւոր մի խնայելիք քու լուսման ազգին որբ դաւակներուն համար:

Մարգարէտեանի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՇ, 30 Յուլիս

(Շար. եսի. քիւնեւ եւ վերջ)

Ճպրանցի աշխրթի էլ ազատի (ցեղապետ) Իպրայիմ ազան, Վարդոյ գաւառի Կուստէմիր և . . .

(\*) Արդարեւ ինչ սքանչելի քրիստոնէութիւն եւ մարդասիրութիւն այս քոյի տակ ծածկել յետին եւ քու նպատակներ. . . Մ. Թ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍԿԱՆԱԼԻՆ

V

Մենք չըջատուեցինք սեղանը, չորս շիշ դիւնի սրահանջեցինք. նոյնքան շիշ էլ խորոված և խօսակցութիւնը սկսվեց:

Ուրեմն այդքան հետաքրքրված էիր ինձնով. բայց ի՞նչ կար հետաքրքրվելու. Միջոցին փախտակահաններ շատ. դու էլ հանդիպած կը լինիս այդ տեսակներին, քու զխոսվէ էլ քիչ բաներ չեն անցել, լսածիս հա մեմատ:

Այո, Միջոցին անհետ կարծես սայ, բայց նրանք մեծ մասամբ ուտեր են հնարում: Նրանցից մի որսը գաղափար չի կարելի կազմել Միջոցին, տաժանակիր աշխատանքի մտայն:

Ես շատովմ եմ որ դա պարծեն կոտ չես, սուտ չես խօսի: Չարած գործերով չես պարծենայ, յետոյ ինձ հետաքրքրում է աւելի այն թէ քեզ միայն հայրենիքի կարօտը ստիպեց

Պապկան գիւղերէն՝ իւր անցեալի մէջ կրած պարտութեան վրէժը լուծելու համար, յարմար առիթի մը կը կըստատէր: Յուսիսի վերջեր 120է աւելի համիրտիյէ հեծելազօրքերով մէկ տեղ այդ երկու հայ գիւղերու վրայ յարձակեցաւ բնակիչներ սուրէ անցնելու ու գիւղերն ալ քար ու քանդ ընելու. գիտումով, ինչպէս որ երկու ամիս ալ առաջ, այդ գիւղերէն մէկ ժամ հեռաւորութեամբ 100 տունէ բաղկացեալ Սլըքան հայ գիւղն բոլորովին աւերակ դարձուց ամէն տեսակ անգթութիւններ գործելով:

Կուստէմիրի բնակիչքն, իրենց շատ մը տեսակ յատկութիւններով, բոլորովին կը տարբերին գաւառի ժողովրդէն. աւելի լեռնցի ժողովրդի կը նմանին. և իրենց տեղւոյ եւ գիրքի աճյարմարութեան կարեւորութիւն չը տալով, զէնքի և կուռոյ սիրահար էին, ամէն ժամանակ իրենց վրաս հասցընողին կաշխատէին կրկնապատիկ վրասել, ու այսպէսով իրենց շրջակայ քիւրտ աշխրթներու վրայ ահ ու սարսափ սփռած էին. այդ պատճառաւ է որ մինչեւ այսօր բան մը չը կըրցան ընել այդ գիւղին:

Ձէնք չը կըրոզ հայ մը, թուլասիրա, վախկոտ կը նկատէին ու չէին յարգեր. ատոնց ամենէն չքաւորն իսկ պէտք էր որ զէնք ունենար իւր տուն, որպէսզի տմարդի չը նկատուէր: Իրենց անուան արատ չը գալու համար ամէն ինչքերներն կը զուհէին մէկզմէկէ յետ չը մնալու համար: Մէկ խօսքով, Մշոյ գաւառներու մէջ այդ գիւղն բացառիկ գիրք մը ունի:

Փախչել և Կովկաս վերադառնալ. թէ ուրիշ պատճառներ էլ կան:

Ճիշտն ասած միայն հայրենիքի կարօտը չէր ինձ այս կողմերը քաշողը: Ի հարկէ փախչելու գլխաւոր շարժառիթը ազատ մարդ լինելու ծաւառն էր, բայց կային և ուրիշ պատճառներ, որոնք ինձ Կովկաս բերին: Ես տաժանակիր աշխատանքից փախոյ 93 թվականին և կարողացայ մի հրէայի անցագիր ձեռք բերել: Այդ անցագրով սկսեցի Միջոցին գանազան քաղաքներում մանրամասնութիւն անել, մինչեւ 94 թվականի աշունը: Այդուհետև թեթեւի մէջ կարողացի Սաուունի ապստամբութեան և կոտորածի մասին, արիւնս գլուխ թաւ: Ես զգացի որ ինչպէս մի ուժեղ և ճարպիկ մարդ օգտակար կարող էի լինել այն ժողովրդի մէջ, որի ամենաչնչին մասը միայն կուր և յայտարարել իրենից շատ ուժեղ բռնակալի գէմ, և որչնցի Կովկաս վերադառնալ: Ու ահա վերադարձել եմ. բայց դեռ չեմ կարողանում նպատակիս հասնել: Մարդ չեմ ճանաչում. միակ իմ գլխու գնալ էլ չեմ ուզում: Երբ կարող ես մի ճար արա, հնար գտի, քանի ծակը չեն գրել կորչեմ դնամ այստեղից:

Մարդու թաղանթով սարկել անկարող եմ, իսկ ազատ էլ երկար սպրել անկարելի է. մի կերպ ոտսիկանութեան ականջը կընկնի, մէկէլ տեսար որսկան չների պէս ետեւիցս ընկան. . .

Մենք էլ, մենք էլ ենք ուզում դնալ միջամտեց եղօն. էլ ինչի համար ենք ապրում. մենք էլ հայ ենք: Մի քանի մեղքեր ունինք. կերթանք այդ մեղքերը մեր երկրի համար թափած արիւնովը կը սրբենք:

Բայց գիտե՛ք ի՞նչ կայ տղերք, ամէն մարդի էլ չեն ուզարկում կըրուելու. չը նեղանաք. դուք Միջոցին անկարող մարդիկ էք, մինչեւ որ չը համոզէ թէ՛ դուք ազոտոտ յանցանքների համար չէք Միջոցին ուղարկված, ձեզ ոչ ոք չի ընդունի կազմակերպութեան մէջ: Հայրենիքի դատը սուրբ դատ է, այդ դատը պէտք է պաշտպանել մաքուր սրտով և մաքուր ձեռքերով:

Ձէ, չէ, մեր մէջ ազոտոտ յանցաւոր չըլկայ: Պարզեմ քեզ, միջամտեց վահէն, եղօն մի վախառուի ցորենի դէզն է այրիլ. այդ վախառու եղօնց տունը քանգել է մի քան մանէթի համար: Մէլընը իր կնկայ ևտեւիցը ընկնող ընկերոջն է սպանել:

Իսկ ես էլ ինձ ձերբակալել ուզող ոտսիկանին եմ սպանել, այսինքն

Ճպրանցի աշխրթի ցածահագի էլ ազատի ըստած գազանը այդ գիւղին գրացի ըլլալով, լաւ մը ուսումնասիրած էր ատոնց կեանքը. ատոր համար ալ մինչեւ այս օրս քաշուած էր վրաս մը հասցընելէ, վախնալով որ փոխանակ իւր բաղձացած նպատակին հասնելու, ընահակառակն ինքն պիտի վրասուէր:

Որքան որ մէկ կողմէն կը քաշուէր, միւս կողմէն ալ իւր սիրտը կըծող վրէժի ցաւ մը կար որ ամէն ժամանակ զինք կը մաշէր. ատոր համար ալ ամէն վրատնգ աչք առած, սկսաւ նախ այդ փրկի վրայ արշաւել. գիւղի մօտ հասնելով, քրդական խորամանկութեամբ մը ազեց իրեւ բարեկամ գիւղ մտնել, ու ապա իւր գազանային ծրագրուածներն ի գլուխ հանել:

Կուստէմիրին վաղօրօք այդ նախապատրաստուած գաւառի թիւններն լսելով չը ձգեց գիւղ մտնել. այդ ժամանակ սկսաւ երկու ուստէք հրացանաձգութիւն, ու մինչեւ չորս ժամ տեսեց: Այդ միջոցին վրայ հասաւ կրկին ճպրանցի աշխրթին Ալիէ Սլիմիի տղան իւր 60ի չափ հետեւորդներով, իւր քեռիներով և ցեղակիցներով: Այդ տեսակնկալ կուրին ընդ միջոց վերջ մը տալու համար:

Կուստէմիր մէջ քրդերէն 15 մարդու ու 18 ձիու կորուստ ունեցան և 8 մարտաչ վիրաւորուած: Էլ Աղասիի սրտին անբուժելի վէրքն էր բացած. կատաղած ինչ ընելիքն չէր գիտեր, ատոր համար ալ իւր ազգակցի միջամտութեան կարեւորութիւն չը տալով կուրը

կը շարունակէր: Սլիմիի տղան որ իւր կտրուածութեամբ ամենու վրայ սարսափ ձգած էր, խօսքն ազգեցութիւն չունեցաւ: Ինքզինք անպատուած զգաց, իւր մարդիկներով մէկ տեղ կուստէմիրից կողմն անցնելով, ինքն ևս սկսաւ զարնել. քիւրտերն այդ տեսակով ու վտանգի ծանրութիւնը զգալով փախուստ տուին:

Ալիէ Սլիմին 30 տարիներ առաջ կուստէմիր երթալ գալով, այդ գիւղի ամենէն ազգեցիկ ու բարեկեցիկ ընտանիքի Սարուխանեց գալոյ ըռէյիսի ազջիկ Սալվիի վրայ կը սիրահարի. օրին մէկ Սալվին իրենց արտադրած միջոցին, Սլիմին իրեն հանդիպելով բռնի կը փախցնէ: Այդ հայ ազգայն երկու տղաներն են որ ամէն ժամանակ երբ վտանգ մը պատահելու ըլլայ այդ գիւղին, իւր քեռիներուն, միջոցներ ձեռք առնելով պաշտպանած են ու կը պաշտպանեն:

\*\*\*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Գերմանական մամուլը անտարբերութեամբ պիտեց Հայաստանի նահատակութիւնը, նոյն իսկ ջանաց կարծիր—Գազանի վայրագ բարբարոսութիւնը արդարացնել Սակայն վերջերս այդ մամուլը քիչ մը փոխած է իր ուղղութիւնը որոնցմէ մին «Թօսթ» թերթը հետեւեալը կը գրէ:

Ինքնապաշտպանութեան միջոցին հակառակորդիս սպանել եմ:

Մենք գող, աւագակ, մարդասպաններ չենք. մեզ մարդիկ ստիպել են մարդասպանութիւն գործել: Մարդիկ ստիպել են վրիժառու լինել, եւ մենք մի տեսակ դատաւորներ ենք հանդիսացել. եղօն իր և շատերի տները քանդող վախառուին է պատժել: Մեղքը իր կնոջ և իր պատուի դժմ օտնձգութիւններ անողին, իսկ ես իմ անհատական ազատութիւնս կապտողն:

Եթէ յեղափոխականները այս անսակ յանցանքները ազոտոտ համար են, նրանք ուրեմն յեղափոխականներ չեն: Ե՛հ, այդ մասին դեռ վերջը աւելի երկար կը խօսինք: Բայց դու ինձ այն ասա, մենք իսկապէս կանոնաւոր յեղափոխական կազմակերպութիւններ ունինք. թէ այնպէս, թէ թեւ բաներ են կըսանքը, Ես չեմ հաւատում որ մեր ժողովուրդը այդ տեսակ բանի համար շատ փող տայ, մանաւանդ հարուստները. իսկ եթէ փող չը լինի, յեղափոխական կազմակերպութիւնը կրէք չի կարող ուժեղ լինել:

Հարուստները պէտք է դորով փող պահանջել: Երանի թէ՛ այդ դործը մեզ երեքիս յանձնվէր, մի երկու ամսովայ մէջ ահագին փող կը հաւաքէինք, ամէնքն էլ կը յանձնէր յեղափոխական գանձարանին:

(Շարունակելի)

«Գրգռական վայրագութիւններ հայոց դէմ» — Մուշի սանճագի մէջ մայիսի սկիզբէն ի վեր հայոց և քրդաց միջեւ կը տիրէ եւրարու դէմ լարուած անսովոր վիճակ։ Կը հաստատուի որ Բերդակ քիւրտերէն աւերուած է և բնակիչներէն մաս մը սպաննուած են։ «Այս յարձակումին պատճառը ինչպէս ամէն ատեն սուս լուր մը։ Իբր թէ հայ յեղափոխականներ կը գտնուին եղեր Բերդակի մէջ»։ այսքանը կը բաւէր... և քիւրտերը յարձակեցան Բերդակի վրայ։ Մայիսի 30ին լուր տարածուեցաւ թէ Մուշէն սզնուական մը, Գոթանդառէ Շէրիֆ ազա, անբեւոյթացած և Մուկունքի հայերէ Բերդակի մօտ սպանուած է։ Այս լուրը, նոյ իսկ սուանց ապացուցուած լինելու բաւական եղաւ, որ հայերու և քրդերու յարաբերութիւնները լարուին։ Մուշի մէջ բարձրացաւ ազմուկ։ Պիթիսի վալին Մուշ եկաւ խաղաղութիւնը վերահաստատելու մտքով, բայց իրեն անկարելի եղաւ հայերուն հաւատացնել թէ իր ազգեցութիւնը բաւական է քիւրտերու հայոց դէմ սնեցած դրդումը զսպելու համար։ Յունիսի առաջին օրերուն մէջ Մուշ պաշարուած քաղաքի մը կը նմանէր։ Ձիւնուած քիւրտեր և թիւրքեր խուճերով կը շրջէին փողոցներու մէջ, մինչդեռ հայերը վախէն իրենց տունները քաշուած պահուեցին։

«Նըջակայ հայ գիւղերը կը գրտնուին շատ տխուր վիճակի մէջ։ Շատ հայեր սպաննուած են քիւրտերէ շատեր բանտարկուած են (Մսկունքէն միայն 30 հոգի), շատ հայ գիւղեր կողոպտուած են։ Սասնոյ մօտ գտնուող գիւղօրայք՝ Սոյաթանլը և Ճիպրանլը քիւրտցեղերէն մեծ վնաս կրած են։ Այս երկու ցեղերը հայոց Ս. Կարապետ վանքի բարձրութեանց վրայ իրարու հետ մրացած և Ճիպրանցի համախոյններու հեծելազօրաց սպայ իպրահիմ պէյի հրամանատարութեամբ աւերեցին կողոպտեցին շրջակայ գիւղօրայք, Միայն Գուարու գիւղէն 1000է աւելի անասուն գողցուած է»։

Ահա Հայաստանի ներկայ վիճակը։ Եւ երբ քիւրտը ու թիւրքը վէնքի ուժով մեզ կ'սպաննեն, մեր ունեցածը կը կողոպտեն, մեր ընտանիքի սրբութիւնը կը պղծեն, մեր կոյս քոյրերու պատիւը կ'անարգեն, այս ճգնաժամական ժամանակները կը գրտնուին դեռ մեր մէջ գէպի յեղափոխական և զէնքի փրկարար գործը անտարբեր հայեր, կը գտնուին նաեւ 12 տարուան յե-

ղափոխականներ, որոնք դասալիք եղած չեն ամչնար ու կելլան լըրբարար մեր գլխին շան քարոզ կը կարգան, որ յեղափոխութիւնը ձգենք։ Ինքնապաշտպանութեան բնազդը Աստուած անասուններու մէջ ալ դրած է, մենք ալ անասուններէ վար դասալիք չենք ուզեր։ Ամօթ անտարբերներուն, սեւ մուր դասալիքներու երեսին, իսկ մենք, յեղափոխական ընկերներ, մեր կըռուող քաջերու շարքերը սեղմելով կը բռնենք մեր մատաղ կեանքը սիրած հայրենիքի ազատութեան սուրբ դործին համար զոհ կը կատարենք մեր նուիրական պարտականութիւնը։ Հեռի մեզմէ ամէն վհատութիւն, մեր նշանաւանը թող ըլլայ միշտ զէնք, զէնք...»

**ՈՂՈՐՄԵԼՈՒ ՄԻԻԹԱՐՈՒԹԻՒՆԸ**

ՇԱՐԺՈՒՄԻ անցեալ շաբաթ օրվայ թուի մէջ յայտարարեցինք Մ. Բ. Կոմիտէի Պետր Իրազուէլի մասին տրուած որոշումը եւ չեղեցինք այդ պարտի սերտ բարեկամութիւնը Իրաւունքի խմբագիր եղած Յակոբ Գուրպէթեան կողմէ տարածի հետ։

Հասած բարոյական հարեւոր տակ շարած՝ մէծ թիւրքերից դրամ խնդրող եւ միմիայն 50 ֆր. ընդունող Յակոբ Գուրպէթեան, ուրիշ հնար չը գտնելով այդ հարուածը ետ կ'ստեցնելու, դիմեց թուրք «եղածման» փաստաբաններին յատուկ օյինքազութեան, իր Իրաւունք կողմէ փախարի մէջ իբր թէ հաւաստի աղբիւրներից տեղեկանալով հետեւեալ սուտը հլոտորեց։ Արվախի Իսակ (Վարդո) անձը, Իաշնակցութեան գործուն անդամութեան բաց թողնուած է, ու յայտարարեց որ եթէ ԴՐՈՇԱԿը չը հերքէ, ինք ճիշդ պէտք է ըզնուէր, այդ լուրը։

Ինքը եղածման, հուզուողներ, եւնճի, թրքական հնարագիտութիւնը այդչափ է միայն...

ԴՐՈՇԱԿը քեզի պէտքերին երբ մարդու տեղ դրաւ, որ հիմա քո մէկ սուտիդ համար մարդու տեղ դնէ։

Իսկ մենք յայտարարուած ենք այդ եղածման հանգստացնելու համար միայն, որ Արվախի Իսակ (Վարդո) կողմէ անձը, նոյն վաղի ունի Իաշնակցութեան մէջ, ինչ որ միշտ ունեցել է իր սիրտը ուզած վարկեանին միշտ գործուն անդամ է, ու խնդրուած ենք որ այս յայտարարութիւնը իր «լրտես» բարեկամներին հազորդէ որ նրանք էլ յայտնեն ուր որ անկէ, եթէ միայն ինքըն էլ լրտես լինելու ընդունակ չէ... այն էլ զրպարտող լրտես չէ։

**ՎԵՍԵԼՈ ԽՈՒՄԲԸ**

Բուլղարիայի մէջ այս գերասանական խումբն է միայն որ կարող է հայերի համար հասկանալի լեզուով փոքր իշտաէ լուրջ ներկայացումներ տալ։ Դժբախտաբար այդ հասկանալի լեզուն

թուրքերէն է. բայց ինչ արած անհարը կերել է բանճարը։

Այս տարի այդ խումբը գտնելով մէջ վառնայի մէջ և մի գեղեցիկ որոշում է տուել. այսինքն ամէն հինգշաբթի բարոյական բովանդակութեամբ դրամներ ներկայացնել։

Այդ որոշումը իր բարբար ազգեցութիւնը կունենայ թէ հասարակութեան վրայ և թէ իրենց դերասանների։

Վեսելո խումբը շարունակ կ'օմնիդներ ներկայացնելով, այն էլ մեծ մասամբ թրքական ճաշակով և թրքական կեանքից, եւս առաւել փչացնում էր մեր հասարակութեան առանց այն էլ թրքական ճաշակը վնասվում էր նրանով, որ գեղարուեստը ընդունող մի կողմ թողած իր ընդունակ անգամներին արգիլում էր ոչ միայն յառաջագի մեկու այլ և դարձնում էր գոեհիկ կոմիկներ։

Անցեալ հինգշաբթի ներկայ լինելով «30 տարւայ թուրք խաղացողի» դրամին, բաւական լաւ ապագութեան տակ հեռացանք։ Միայն պէտք է նկատել որ կնոջ դեր կատարող պակասութիւնը շատ էր զգացվում։

Բարեւանի Պէնլիեանի հետ խաղալու համար աւելի ուժեղ դերասանուհու պէտքն է զգացվում։ Իր խորհուրդ էլ Վեսելո խումբին։

Հասարակական կեանքի մէջ շատ եւ շատ հարցեր կան, որոնք դեռ պարզուած չեն մեր հնամիտ ժողովրդի համար։

Շատ մոլութիւններ կան, բացի թղթախաղից, որոնք կաշկանդում են մեր ժողովրդին. հարկաւոր է ոչ պէտքուարը, կաղմն զանազան բովանդակութեամբ և իրենց նորութեամբ հետաքրքիր դրամներով. հարկաւոր է ժողովրդի հետաքրքրութիւնը շարժել և ուշագրութիւնը գրաւել զէպի լուրջ ներկայացումները։

Պէնլիեան, Բարեւան, Երամեան և Շաքարեան գեղալուստիւն ծառայելու բնգունակ մարդիկ են, ցանկալի է որ իրենց այդ ընդունակութիւնը զարգացնեն գեղարուեստի մէջ կարելի եղածին չափ խոյս տալով իրենց ընդունակութիւնները մեղացնող գոեհիկ կոմիկութիւնից։

**ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ**  
Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Ամէնքին յայտնի է թէ ի՞նչ նախանձելի վիճակի մէջ են գրտնըւում հայկական անգին հնութիւնները։

Ամէնքը գիտեն թէ ի՞նչպէս մինչեւ այժմ ոչնչացնում էին և ոչնչացնում են մեր պատմու-

թեան դարաւոր և թանկագին յիշատարականները։

Եւրոպական ազգերի մօտ եւրէք մենք չենք գտնի այդպիսի անխիղճ ապրախտութիւն զէպի նախնիքներից մնացած աւանդները, այլ ընդհակառակը՝ նախնեաց հնութիւնները տմենապատուաւոր տեղն են գրաւել նրանց համար յատուկ թանգարանների մէջ, իբր կենդանի վկաներ նայն ազգերի անցեալ դարերում գոյութեան։ Այդ պօրաւոր վկաները նրանց ազգային հպարտութիւնը պարծանքն են կաղմում։

Գիտնական հետազոտութիւններով զբաղողներին ծանօթ է թէ Պարիզի և Բեռլինի Ակադեմիաներն հրատարակած են արդէն սեմական ազգերի յատուկ լեզուներով, նոյնպէս և լատին և յոյն լեզուներով գտնուած բոլոր արձանագրութիւնները. մասնաւոր ժողովածուների (բօրբուլ) մէջ ամփոփած. այնպէս որ նոյն ազգերի պատմութեամբ զբաղող մէկը կարող է յառանց դժուարութեան իր առջեւ ունենալ նոյն ազգի յատուկ արձանագրութեան ամբողջութիւնը. իսկ մենք չունինք մի այնպիսի ժողովածու։ Ուստի՝ մեր ուժերի ներածին չափ պէտք է թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս օգնենք նոյն ուղղութեամբ մի աշխատութիւն պատրաստող տնձին։

Աչքի առաջ ունենալով մեր հնութիւնների վիճակը, Պարիզի մի խումբ հայեր կամենում են գոնէ ազատել կորստից այն ինչ որ կարելի է։

Ամէնքին հասկանալի է այդ ձեռնարկութեան կարեւորութիւնը և օգտակարութիւնը սակայն ամէն մէկն էլ գիտէ թէ ի՞նչ ծանր աշխատանքների եւ նիւթական զոհողութիւնների կարօտ է միայնպիսի գործ։

Իւրեքազգաբար մենք ունինք մի այնպիսի մասնագէտ, պ. Կ. Յ. Բասմաչեան, Պարիզի Համալսարանում ուսած, որը պատրաստ է ամէն տեսակ զրկանքներ կրել և աշխատել այդ գաղափարի իրապարծման համար։

Նոյն գիտնականը Վ. Կ. Կաթողիկոսի առաջարկութեամբ արգէն մի անգամ յաջող կերպով կատարած է մեր և իր բաղձանքը։

Մի փոքր գաղափար տալու համար կատարուելիք աշխատութեան որին ձեռնարկեք է պ. Բասմաչեան, բաւական է յայտնել թէ՛ երկը պիտի կրէ «Հայարձան» անունը և պիտի պարունակէ մեր բոլոր շէն և աւեր յիշատակարանների — վանքերի, բերդերի և ազգային ամէն աւսակ հնութիւնների, գեղարուեստական ու մանաւանդ ճարտարա-

պետական մնացորդները, հին արձանագրութիւնները և ձեռագրաց—որակապատկերները հանդերձ մանրամասն տեղեկութիւններով. հնախօսական ու պատմական ծանօթութիւններով և արձանագրութիւնները ատոյգ, անթերի հրատարակութեամբ:

Կատարուելիք ուսումնասիրութիւնները այն մասերը որ կրնան եւրոպացիներն էլ հետաքրքրել եւ մեր ազգի փառաւոր անցեալը հաստատել գիտնականների առջեւ պ. Բամաճեան պիտի հրատարակէ Ֆրանսերէն լեզուով եւս. ինչպէս արդէն կատարած է նոյնը սրանից առաջ:

Այցմ մեծարոյ տիար զգալով նիւթական միջոցների պակասութիւնը այդ դարձի շարունակութեան համար, գիմում ենք ձեզ օգնել ձեր ոյժերի շափ, մեզ հարկաւոր է միայն 1000 ուրլի, որի մի փոքր մասը հաւաքուած է մեր մէջ:

Ձեր նպաստը խնդրում ենք ուղարկել մեր պ. գանձապահին Մ. Իսկէնտէր 36 բիւ տը լա

Թուր—ՏՕվէրը Բարիլ նուիրատուների անունները և հաշիւները մանրամասնաբար կը հրատարակուեն Լ'Արմէնիոի և «Բանասէր»ի մէջ:

Շիշեալ խմբի կողմից  
Տօք. Սըզրիան  
Մինաս Չերագ  
Սուխաս Վոյ. Պարոնեան

Զ Ե Կ Ո Յ Յ

Վարժարանիս երկսեռ ուսանողները իենց անձին վրայ իսկ զգալով այն կորուստը, որուն միշտ կենթարկուին վարժարանական անհրաժեշտ պիտոյքներու եւ գործիքներու չգոյութեան պատճառաւ, եւ անսնելով այն զրկանքը որուն զոհ կերթան աղքատ աշակերտներն ու աշակերտուհիները իրենց անհրաժեշտ գրքերն ու տետրակները նոյնիսկ հայթայթելու անկարող ըլլալով:

Սեպտ. 23ին կազմեցին Օրսակեան Սանուց Ընկերութիւն մը, իրենց հասոյթներուն շափով սյգ պէտքերը լրացնելու և իրենց աղքատ ընկերակիցներուն օգնելու համար:

Մանուցանելով ասիկայ Վառնայի հայ հասարակութեան, կը հրաւիրենք մեր դաստիարակութեան գործով հետաքրքրուող և մեր ու մեր ապագայ սերունդներուն աւելի կանոնաւոր ու ամբողջական կրթութիւն մը ստանալուն նախանձախնդիր բոլոր ազգայինները և մանաւանդ ե.

րիտասարգները, որոնք դեռ շատ հեռաւոր անջրպետով մը չեն բաժնուած մեր սիրելի դպրոցական հարկէն, որպէսզի փութան աջակցիլ իրենց անդամակցութեամբ կամ նուէրներով մեր այս ջանքերուն՝ որոնք ամենէն դորձնական զարկը պիտի տան մեր դպրոցին դասաւանդութեանց կանոնաւոր ու գերազանցօրէն օգտաւէտ դառնալուն:

Սրսակեան Սանուց Ընկ. Գործ. Վարչութեան կողմէ  
Ատենադպիր Ատենապետ  
Մ. Յովնանեան Մ. Թովմասեան  
Վառնա 28 սեպտ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սեպտ. 16ին Թիֆլիզի բազմիքին մէջ յանկարծակի մեռեր է Թիֆլիզի քաղաքագլուխ Գէորգ Եւանգուլեան 57 տարեկան հասակի մէջ: Գէորգ Եւանգուլեան կողկասի հայ հին պահպանողականներու զլխաւոր և ուժեղ ներկառայուցիչներէն մին եղած է:

— Օրմանեան պատրիարքի ստեղծման պալարը առողջացնր է, ու պատրիարքի առաջին գործը եղած է պատարագ մատուցանել...

— Ռուսիա Բ. Գրան ուշադրութիւնը հրաւիրեր է Հայաստանի վրայ, ուր կոտորածները և թաւանները կը շարունակուին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Հակառակ այն իրատէին որով նախ քան Ֆրանս—թրքական յարաբերութեանց խզման, Քարափ ընկերութիւնը կարտունէր օգտուիլ իրեն տմէն իրաւունքներովը, ուսօր Բարձրագոյն Գուռը ընկերութեան կարգիւ նախնական աշխատանքի սկսիլ, պատճառաբանելով որ ընկերութիւնը տարի մը վերջը, երբ Բ. Գուռը չը կարողանայ գնել Քարափները, կրնայ աշխատանքի սկսիլ Թուրքիայէն 25 հազար լիրայ տուգանք շտանալով:

— Պոլսոյ նշանաւոր պաշտօնեաները Երլարզի ինչպէս կերելի գաղտնի հրամանով, Բերայի մէջ եւրոպացիներու ձեռքով շինուած ամէն մեծ ընդարձակ ստաները կը գնեն:

Ս. փաշան անի մը ամսուան ընթացքի մէջ չորսմեծ տուներ գնոր է, որոնց համար երկու միլիոն ֆրանքէ աւելի վճարած է: Ամէն մարդ ալ գիտէ որ Ս. անձամբ հարուստ մարդ չէ, և այդչափ ստակ պաշտօնէն զազրելէն

ի վեր չէ որ կրցաւ հաւաքել, այդպիսի մեծ շափերով զանոնք տեղաւորելու համար:

Ս. փաշայ իր քրիստոնեայ վարձկաններուն այնպիսի պայմաններ կառաջարկէ որ անոնք ստիպուած կըլլան չը վարձել այդ տուները, պայմաններէն մին այն է որ վարձկալը պիտի մեծ տուգանք վճարէ եթէ անոր բնակարանին մէջ պայթուցիկ նիւթ գտնուի: Այս միայն կը բաւէ հասկնալու համար թէ ինչ նպատակով կըլլան այդ գընումները:

Եթէ Եւրոպացի սեփականատէրերու կալուածքները այս ձեւով իրենց ձեռքէն ելլայ, այն ժամանակ Պոլսոյ միակ եւրոպական թաղին գործը ալ լինցած է: Ալ պէտք չըկայ Չինաստան երթալ օտարամերժութիւնը տեսնելու համար, ան այստեղ ալ կը գըտնուի, նոյնիսկ ամենաեւրոպացիացած թուրքերուն քով:

— Պոլսէն կազէթ տը «ճրանկֆուրթ»ի կը հազորդեն թէ՛ ըստ երեւոյթին Բուլգէթի խնդիրը լինցած է: Անգլիա կը համաձայնի Սուլթանի գերիշխանութիւնը ճանչնալ Բուլգէթին վրա, նոյնպէս և համաձայն Պաղտատի երկաթուղիին գծի մինչեւ հոն հասցնելը, միայն այն պայմանով թուրքիա բոլորովին հրաժարի իր զօրքը առաջ տանելու: Անգլիա որոշած է յարգել Բուլգէթի գերիշխանութիւնը, բայց ուրիշ ոչ մէկ պետութեան թոյլ պիտի տայ տիրել Բուլգէթը:

— Եսկիւպէն «Թան»ի կը հազորդեն թէ՛ թուրք զօրքեր յարձակում գործեր են տան մը վրայ ուր Մակեդոնական Կոմիթէի 7 անդամներ կը գտնուին եղեր, ստոնցմէ 7ը սպաննուեր են, իսկ երկուքը փախեր են:

Տան մէջ երկու ուսմը գտնուեր է:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Նահանգներու ոստիկանութեան գովիսէրները այցելեր են կրօնական միաբանութիւններուն հաստատութիւնները, հաստատելու թէ օրէնքին կը հնազանգին:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Յուլիոսի պահապանները կը յայտարարեն որ միւս ամէն բանտարկեալները սարսափելի կերպով արհամարեր են Յուլիոսը: Բանտարկեալներէն մին Մակֆրիլիին պատկերը Յուլիոսի սենեակին դիմացի սենեկի դրանը փակցուցեր է, որպէսզի Յուլիոս իր զոհը միշտ աչքին առջեւը ունենայ:

— Պոստօն քաղաքի մէջ թուրք տաղաններու ձեռքը գերի ինկած Միոն Սթասի փրկանքը վճարելու համար հանգանակութեան սկսեր են:

23 հազար տոլար արդէն հաւաքուած է: Ընդ ամենը 100,000 տոլար կը պահանջեն տաղանները:

Ա Ն Գ Լ Ի Ա

Ռուս փոխառութեան մասին շատ կը խօսուի, կըսուի թէ այս միջոցիս Ռուսիա մէկ միլիարդ ֆր. պէքտութիւն ունի:

— Եւրոպական նախարարութիւնը կը ծանուցանէ թէ՛ հոկտեմբեր վեցին երեք միլիոն ոսկիի նոր փոխառութիւն մը պիտի կնքէ:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս

Գերմանիոյ անիշխանականները մտադիր են ժողով մը կազմել, եթէ ոստիկանութիւնը չը խանգարէ, վիճարանելու Մակֆրիլիի ոպանման եւ երեոփոխանական ձեւեկառավարութեան մասին:

Կ Ի Ե Տ Է

Եւրոպական բոլոր հիւպատոսները կրտէ կը հաւաքուին, այդ կը բացատրուի անով, որ շուտով կրտէն Յունաստանի պիպի միացուի:

Ա Զ Կ

Բաղէշի կուսակալութեան պատկանեալ Յուրդափ գիւղէն Պէկօ Ասատուրեանի, հաստատակազմ շէկ պէխով ու յոնքերով 6 ամիսէն շի վեր ուրլինելն յայտ է զայն: Եթէ ճանաչողներ չկան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը միւլթարել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով:

Ա Զ Դ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին իշխան Պօրիոթիկիաութեան առթիւ տպուած գործածուած նամակաղբօշման 1—5—15—25 սանդիմ:

Գիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏՅԱՆ  
Վառնա

Отговорникъ:  
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна